ՀՀ, ք. Երևան

20.02.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ
«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հետևյալ փաստերը.

- «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/40» ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով ընտրված մասանակից է ճանաչվել «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն և Պատվիրատուն համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն համակարգի միջոցով ներկայացրել է պայմանագիրը, որը սակայն հաստատված էր ոչ վավեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ՝ այսպիսով խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանագրերը ստորագրելու ժամկետը և նույն օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն զրկվելով պայմանագիր կնքելու իրավունքից:
- «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/40» ծածկագրով գնման ընթացակարգի 4, 5, 7-րդ չափաբաժինների մասով ընտրված մասանակից է ճանաչվել «ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ն և Պատվիրատուն համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: «ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ներկայացրել իր կողմից կնքված պայմանագիրը և նույն օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

և

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքերը գնահատել բավարար:
2. «ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքերը գնահատել բավարար:
3. «ԳԱՐԱՆՏ 24» և «ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ների տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:
4. Ստորև ներկայացվում են «ԳԱՐԱՆՏ 24» և «ՌՈՒԲՇԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ների տվյալները՝ համաձայն սահմանված ձևաչափի:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ	02910767	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 25/14, բն. 76	v			ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-24/40
«ՌՈՒԲԻՆ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ	01306961	ՀՀ, ք. Երևան ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ 31/1, բն.42	v			

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՄԱՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ